## ԱՂՕԹՔ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՁԻՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ Ի ՔՐԻՍՏՈՍ

Զոր արարեալ է սրբոյ տեառն Ներսիսի Հայոց Կաթողիկոսի։

- 1. Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ բեզ, Հայր եւ Որդի՝ եւ Սուրբ Հոգի, անեղ եւ անմահ բնութիւն, Արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց, ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 2. Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն, Արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի, հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեան եւ լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ ի հաձոյս եւ ընդունել ի քէն զխնդրուածս իմ, եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։

lнc

Пфири

 $\Pi \overline{\mathbf{x}} \mathbf{c}$ 

- 3. Հայր երկնաւոր, Աստուած ձշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս եւ առաջի քո, ընկալ զիս որպէս զանառակ որդին, եւ զգեցո ինձ զպատմուձանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 4. Որդի՝ Աստուծոյ, Աստուա՝ծ ձշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ եւ առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար, թաղեցար եւ յարեար ի մեռելոց եւ համբարձար փառօք առ Հայր, մեղայ յերկինս եւ առաջի քո, յիշեա զիս որպէս զաւազակն, յորժամ գաս արքայութեամբ քով, եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 5. Հոգի՝ Աստուծոյ, Աստուած ձշմարիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի վերնատունն եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ Աւազանին, մեղայ յերկինս եւ առաջի քո, մաքրեա՝ զիս վերստին աստուածային հրով քո, որպէս հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն, եւ ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։

## PRAYERS FOR EACH AND EVERY SOUL OF ALL BELIEVERS IN CHRIST

Which are made by Holy Master Nerses Catholicos of The Armenians (1102 – 1173)

- 1. I confess with faith and adore You, Father, Son, and Holy Spirit, uncreated and immortal essence, creator of angels, of humans, and of all that exists. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 2. I confess with faith and adore You, O Light indivisible, simultaneous Holy Trinity and one Godhead, creator of light and dispeller of darkness. Dispel from my soul the darkness of sin and ignorance, and at this hour enlighten my mind, that I may pray to You according to Your will, and receive from You the fulfillment of my supplications. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
  - 3. Heavenly Father, true God, who sent Your beloved Son to seek the wandering sheep, I have sinned against heaven and before You; receive me like the Prodigal Son, and clothe me with the garment of innocence, of which I was deprived by sin. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 4. Son of God, true God, who descended from the bosom of the Father, and took flesh of the Holy Virgin Mary for our salvation, who was crucified and buried, and rose from the dead, and ascended to the Father, I have sinned against Heaven and before You; remember me like the robber, when You come in Your kingdom. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 5. Spirit of God, true God, who descended into the Jordan and into the upper chamber, and who enlightened me by baptism in the holy font, I have sinned against Heaven and before You; cleanse me Your divine fire as You purified the holy Apostles with fiery tongues. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.

- 6. Անե՛ղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով եւ մարճսով իմով, մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ, եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 7. Տեսո՛ղ ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ եւ գործով. ջնջեա՛ զձեռագիր յանցանաց իմոց եւ գրեա՛ զանուն իմ ի դպրութեան կենաց, եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 8. Քննո՛ղ գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, թողութիւն շնորհեա մեղաւորիս, զի ծննդենէ սուրբ Աւազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ քո զգայարանօք իմովք եւ ամենայն անդամօք մարմնոյս, եւ ողորմեա՛քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 9. Ամենախնա՛մ Տէր, դի՛ր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ եւս հայիլ յայրատ, եւ ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան, եւ բերանոյ իմոյ՝ ոչ խօսել զստութիւն, եւ սրտի իմոյ՝ ոչ խորհել զչարութիւն, եւ ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց՝ ոչ գնալ ի՛ ձանապարհս անօրէնութեան, այլ ուղղեա զշարժումս սոցա՝ լինել միշտ ըստ պատուիրանաց քոց յամենայնի. եւ ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 10. Հուր կենդանի Քրիստոս, զիուր սիրոյ քո, զոր արկեր յերկիր, բորբոքեա՝ յանձն իմ, զի այրեսցէ զաղտ հոգւոյ իմոյ եւ սրբեսցէ զխիղձ մտաց իմոց եւ մաքրեսցէ զմեղս մարճսոյ իմոյ եւ վառեսցէ լոյս գիտութեան քո ի սրտի իմում. եւ ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 11. Իմաստութիւն Հօր Յիսո՛ւս, տո՛ւր ինձ զիմաստութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ, ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 12. Կամեցող բարեաց Տէ՛ր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ

- 6. Uncreated Essence, I have sinned against You in mind, soul and body; do not remember my former sins for the sake of Your Holy name. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 7. Beholder of all, I have sinned against You, in thought, word and deed; erase the record of my offences, and write my name in the Book of Life. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 8. Searcher of secrets, I have sinned against You willing and unwillingly, knowingly and unknowingly, grant me—a manifold sinner—forgiveness, for since I was born of the holy font until this day I have sinned before You, by my senses, and by all the members of my body. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 9. All provident Lord, place Your holy fear as a guard before my eyes so they may not look lustfully; before my ears so that they may not delight in hearing evil words; before my mouth so that it may not speak any falsehoods; before my heart so that it may not think evil; before my hands so that they may not do injustice; before my feet, that they may not walk in the paths of injustice; but so direct them, that they may always be according to all Your commandments. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 10. Christ, Living Fire, inflame my soul with the fire of Your love, which You did send forth upon the earth, that it may burn the stains of my soul, sanctify my conscience, purge the sins of my body, and kindle in my heart the light of Your knowledge. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 11. Jesus, wisdom of the Father, grant me wisdom, that I may always think, speak, and do that which is good in Your sight; save me from evil thoughts, words and deeds. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 12. Lord, who wills that which is good, and are the director of the will, let me not follow the inclinations of my heart, but lead me to live always

- առաջնորդեա՝ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. եւ ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 13. Արքայ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց, եւ զօրացո զսիրտ իմ ատել զմեղս եւ սիրել զքեզ միայն եւ առնել զկամս քո, եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 14. Խնամո՛ղ արարածոց, պահեա՛ նշանաւ խաչի քո զիոգի եւ զմարմին իմ ի պատրանաց մեղաց, ի փորձութեանց դիւաց եւ ի մարդոց անիրաւաց եւ յամենայն վտանգից հոգւոյ եւ մարմայ, եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 15. Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի եւ ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ձանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց, եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 16. Աստուած իմ, որ բանաս զձեռն քո եւ լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քով, քեզ յանձն առնեմ զանձն իմ, դու հոգա՝ եւ պատրաստեա զպէտս հոգւոյ եւ մարմսոյ իմոյ յայսմհետէ մինչեւ յաւիտեան, եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 17. Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն եւ բեւեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն եւ զերկիւղ գեհենոյն եւ զսէր արքայութեանն, զի զղջացայց ի մեղաց եւ գործեցից զարդարութիւն, եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 18. Աղբի՛ւր անմահութեան, աղբերացո՛ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան, որպէս պոռնկին, զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ, քան զելանելն իմ յաշխարհէս, եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։
- 19. Պարգեւի՛չ ողորմութեան, պարգեւեա՛ ինձ ուղղափառ հաւատով եւ բարի գործով եւ սուրբ մարճսոյ եւ արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ, եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։

- according to Your good will. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 13. Heavenly King, grant me Your kingdom, which You have promised to Your beloved; strengthen my heart to hate sin, and to love You alone, and to do Your will. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 14. Protector of Your creatures, by the sign of Your cross keep my soul and body from the allurements of sin, from the temptations of the devil and unjust people, and from all perils of soul and body. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 15. Christ, the guardian of all, let Your Right Hand guard and shelter me by day and by night, while at home and while away, while sleeping and while awake, that I may never fall. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 16. My God, who opens Your hand and fills all things living with Your bounty, to You I commit my soul; do care for me and provide for the needs of my body and soul forever. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 17. You who bring back the wanderers, turn me from my evil ways to good ones and imprint upon my soul the recollection of the dreadful day of death, the fear of hell and the love of Your Kingdom that I may repent of my sins and do righteousness. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 18. Fountain of immortality, make the tears of repentance flow from my heart, like those of the adulteress, that the sins of my soul may be washed away before I depart from this world. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.
- 19. Bestower of mercy, grant that I may come to You with true faith, with good works and by the communion of Your Holy Body and Blood. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.

20. Բարերա՛ր Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասցես զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ եւ անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոցն, որ են ի ներքոյ երկնից, եւ ողորմեա՛քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։

21. Լոյս ձշմարիտ Քրիստոս, արժանաւորեա՝ զիոգի իմ` ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ի կոչման աւուրն եւ հանգչել յուսով բարեաց յօթեվանս արդարոց, մինչեւ յօր մեծի գալստեան քո, եւ ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ` բազմամեղիս։

22. Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր` դատել զկենդանիս եւ զմեռեալս, մի մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում, այլ փրկեա զիս ի յաւիտենական հրոյն եւ լսելի արա ինձ զերանաւէտ կոչուճս արդարոց յերկնից արքայութիւնդ. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։


23. Ամենաողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ի քեզ՝ իմոց եւ օտարաց, ծանօթից եւ անծանօթից, կենդանեաց եւ մեռելոց, շնորհեա եւ թշնամեաց իմոց եւ ատելեաց զթողութիւն,

որ առ իս յանցանացն, եւ դարձո զնոսա ի չարեացն, զոր ունին վասն իմ, զի ողորմութեան քում արժանի եղիցին, եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս։

24. Փառաւորեա՝ Տէր, ընկալ զաղաչանս pn եւ կատարեա<sup>՝</sup> ի բարի զխնդրուածս իմ բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին եւ Յովհաննու մկրտչին, եւ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, եւ սրբոց մարգարէից, վարդապետաց, առաքելոց, մարտիրոսաց, հայրապետաց, ձգնաւորաց, կուսանաց ամենայն եւ սրբոց երկնաւորաց եւ երկրաւորաց։ Եւ քեզ փառք եւ երկրպագութիւն անբաժանելի Սուրբ Երրորդութեանդ լաւիտեանս լաւիտենից. ամեն։ 💠

20. Beneficent Lord, commit me to a good angel, that I may deliver up my spirit in peace; convey it undisturbed by the malice of evil spirits that are under the heavens. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.

21. Christ, True Light, make my soul worthy to behold with joy the light of Your glory, in that day when You call me and to rest in the hope of good things in the mansions of the just until the day of Your glorious coming. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.



22. Righteous Judge, when You come in the glory of the Father to judge the living and the dead, enter not into judgement with Your servant, but deliver me from the eternal fire, and make me worthy to hear the blissful call of the just to Your heavenly kingdom. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.

23. All-merciful Lord, have mercy upon all Your faithful, on those who are mine and on those who are strangers; on those whom I know and on those whom I know not; on the

living and on the dead; and forgive all my enemies, and those who hate me, the trespasses that they have committed against me; turn them from the malice which they bear towards me, that they may be worthy of Your mercy. Have mercy upon Your Creatures and upon me, a manifold sinner.

24. Glorified Lord, accept the supplications of Your servant, and graciously fulfill my petitions, through the intercession of the Holy Mother of God, John the Baptist, the first martyr St. Stephen, St. Gregory our Illuminator, the Holy Apostles, Prophets, Divines, Martyrs, Patriarchs, Hermits, Virgins and all Your saints in Heaven and on Earth. And unto You, O indivisible Holy Trinity, be glory and worship forever and ever. Amen. ÷